ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-130

«23» 09 2019թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2019 թվականի սեպտեմբեր ամսվա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 45-Ա

<< 16>> Սեպտեմբերի 2019թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականիմայիսի 18-ի N731-Ն և N912- Ն որոշումների դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին և նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն << Աստղիկ Մանուկյան>> ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի Մուսալեռի փողոց 38/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի այլ հողերի՝ 0,02 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված 37.1քմ ներքին / 50.3քմ արտաքին / մակերեսով խանութը ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի սեփականությունը:
2. Բանավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ՝ Արմեն Խաչիկի Գյոզալյանին օրինականացված 50.3 քմ արտաքին մակերեսով խանութը և 0,02հա հողամասը գնման նախապատվության իրավունքով , ուղղակի վաճառքով գնելու համար:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման որոշման մեկ օրինակը ներկայացնել ՀՀ Կադաստրի կոմիտեի աշխատակազմի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Համայնքի ղեկավար Գ. Ներսիսյան

2019թվականի սեպտեմբերի

Ոսկեհատ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» սեպտեմբերի 2019 թ. թիվ 16 -Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ավագանու 14.08.2006թ. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձերի համարակալման մասին» թիվ 2 որոշումը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում գտնվող քաղաքացի Հովհաննես Ռաֆայելյանին պատկանող 04-081-025-009 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ Մաշտոցի 14 հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ.Ներսիսյան

2019 թվականի 20 սեպտեմբերի

գ. Ոսկեհատ